

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3.

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

27 նոյեմբերի 2016թ.

Նախագահ՝ Մ. Ա. Զաքարյան

Քարտուղար՝ Կ .Հ. Հովսեփյան

Նիստին մասնակցում էին խորհրդի 10 անդամներ:

ՕՐԱԿԱՐԳ

1. Ֆակուլտետի կանոնադրության քննարկում և հաստատում:  
/զեկ. Մ. Ա. Զաքարյան /
2. 2016-17թթ. ուս. տարվա I կիսամյակի I ընթացիկ ստուգումների և ընթացիկ քննությունների արդյունքների ամփոփում:  
/զեկ. Մ. Ա. Զաքարյան /
3. Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ընդլայնված-արդյունավետ օգտագործման վիճակի քննարկում:  
/զեկ. Ա. Միմոնյան/
4. 2016-17թթ. ուս. տարվա I կիսամյակի II ընթացիկ ստուգումների և ընթացիկ քննությունների գրաֆիկի հաստատում :  
/զեկ. Մ. Ա. Զաքարյան /

**ԼՍԵՑԻՆ-** Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի Ժ/պ, խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցներն անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Մ. Ա. Զաքարյանը:

1. Օրակարգի առաջին հարցը ներկայացրեց խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Նա ներկայացրեց ֆակուլտետի կանոնադրությունը և որոշ հարցեր պարզաբանեց կապված ֆակուլտետի կանոնադրության հետ: Քննարկումից հետո ֆակուլտետի կանոնադրությունը նիստի մասնակիցների կողմից

արժանացավ հավանության և որոշեցին ներկայացնել մասնաճյուղի գիտխորհրդի հաստատմանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ-** Ֆակուլտետի կանոնադրությունը ներկայացնել մասնաճյուղի գիտխորհրդի հաստատմանը:

2. Օրակարգի երկրորդ հարցը ներկայացրեց գիտխորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Ձեկուցողը ամփոփեց 2016-2017 ուստարվա I ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների արդյունքները:/ամփոփ տվյալները կցվում են արձանագրության տեքստին/: Ձեկուցողը ամբիոնների վարիչներին տվեց ընդհանուր հանձնարարական ուսումնական գործընթացի վերաբերյալ:

**ՈՐՈՇԵՑԻՆ-** Հանձնարարել ամբիոններին, որ երկրորդ ընթացիկ քննությունների հարցաշարերը ժամանակին տրվեն ուսանողներին:

3. Օրակարգի երրորդ հարցի մասին հանդես եկավ ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատու Ա. Միմոնյանը: Նա ներկայացրեց, որ ֆակուլտետում գործում է համակարգչային մասնագիտական լաբորատորիաներ՝ թ. 1 և 2: Տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված-արդյունավետ օգտագործման վիճակը ֆակուլտետում կայուն է: Ուսանողներին ըստ մասնագիտությունների ցուցաբերվում է խորհրդատվական աջակցություն: Ապահովվում է նաև ծրագրային և տեխնիկական անհրաժեշտությունը: Լաբորատորիաներում գործում է նաև ներքին ցանց և անվճար ինտերնետ:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-** Գ. Վ. Գուլակյանը, Ա. Վ. Ցուցուլյանը: Նրանք կարևորեցին համակարգչային մասնագիտական լաբորատորիայի դերը ֆակուլտետի տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված և արդյունավետ օգտագործման գործում:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Անցկացնել լրացուցիչ պարապմունքներ ուսանողների հետ խթանելու համար տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված-արդյունավետ օգտագործումը ուսումնական պրոցեսում:

4. Օրակարգի չորրորդ հարցը ներկայացրեց գիտխորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Զեկուցողը անդրադարձավ 2016-2017 ուստարվա II ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների անկացման գրաֆիկին: Նա նշեց, որ 2016-2017 ուստարվա II ընթացիկ քննությունները և ընթացիկ ստուգումները անց են կացվելու դեկտեմբերի 12-ից դեկտեմբերի 24-ը ընկած ժամնակահատվածում, որը կազմվել է ի շնորհիվ ուսանողների և դասախոսների հետ համատեղ աշխատանքի:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-** Ա.Վ. Յուզուլյանը, Ք.Վ. Օթարյանը, Կ.Հ. Հովսեփյանը և ուրիշներ:

**ՈՐՈՇԵՑԻՆ-** Հաստատել 2016-2017 ուստարվա II ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների անկացման գրաֆիկը :

**ՆԱԽԱԳԱՀ  
ՔԱՐՏՈՒՂԱԲ**

**Մ.Ա. ԶԱՔԱՐՅԱՆ  
Կ. Հ. ՀՈՎՍԵՓՅԱՆ**